ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԳԱԳԻԿ ՍԵԴՐԱԿԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԸՆԿԱԼՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՈԹՈՂՆԵՐԻ ՊԱՏԿԵՐԱԳՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

ԺԳ.00.02 - Դասավանդման և ուսուցման մեթոդիկա (կերպարվեստ) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2024

Ատենախոսության թեման հաստատվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում

Գիտական ղեկավար՝	մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝ Լեմս Սուրենի Ներսիսյան
Պաշտոնական ընդդիմախոսներ՝	մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Յուրի Վաղարշակի Յուզբաշյան Արվեստագիտության թեկնածու, դոցենտ Մարտին Վարդանի Հարությունյան
Առաջատար կազմակերպություն՝	Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կկայանա 2024 թվականի մայիսի 30-ին, ժամը՝ 12:00-ին, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ՀՀ ԲԿԳԿ-ի «Մանկավարժություն» 020 մասնագիտական խորհրդում:

Հասցե՝ 0010, ք. Երևան, Տիգրան Մեծ 17

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 29.04.2024 թ-ին:

«Մանկավարժություն» 020 մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար, մանկավարժական
գիտությունների թեկնածու, դոցենտ՝ Թերեզա Յուրիի Ազատյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության արդիականությունը: Կրթական վերափոխումների ներկա պայմաններում, կապված հասարակության աշխարհընկալման, գեղարվեստական պահանջմունքների և հետաքրքրությունների հետ, ի հայտ են եկել հակասություններ կրթության հանդեպ աճող պահանջի, որակական զարգացման ու կատարելագործման ոչ բավարար ընթացքի միջև: Պատմամշակութային կոթողների պատկերագրման գործընթացում սովորողների գեղարվեստական ընկալունակության ձևավորման պայմանները սերտորեն կապված են երկրի սոցիալ-մշակութային կյանքի արմատական փոփոխությունների, տեղեկատվական և մանկավարժական նոր տեխնոլոգիաների զարգացման հետ, ինչը դարձել է քննարկման առարկա նկարիչների, հոգեբանների, մանկավարժների, մեթոդիստների, աշխարհագրագետների, պատմաբանների, արվեստաբանների և ազգագրագետների համար:

Սովորողների կողմից պատմամշակութային կոթողների խորացված դիտարկումն ու պատկերագրման հիմնական առանձնահատկությունների բացահայտումը կբերի մեզանում գոյություն ունեցող ամբողջական գիտելիքների համակարգի և հայրենիքի հանդեպ վերաբերմունքի վերագնահատմանը, հայրենաճանաչության աճին, ինչպես նաև ինովացիոն միջոցների ներգրավմամբ՝ ավանդական կրթական համակարգի կատարելագործման ուղիների վերաիմաստավորմանը:

Պատմամշակութային կոթողների պատկերագրման վերաբերյալ համապարփակ գիտելիքների առկայությունը նպաստելու է սովորողների գեղարվեստական ընկալունակության ձևավորմանը, որտեղ շոշափվելու են հիմնականում կերպարվեստի և համակարգչային գրաֆիկայի, ինչպես նաև աշխարհագրությանը, պատմությանը, հայրենագիտությանը և մի շարք այլ բնագավառներին վերաբերող հարցեր:

Թեմայի արդիականությունը ելնում է առաջադրված խնդիրներով պայմանավորված ներքոթվարկյալ գործոնների լուծման պահանջից, որը կնպաստի սովորողների գեղարվեստական ընկալունակության ձևավորմանը պատմամշակութային կոթողների պատկերագրման գործընթացում: Դրանք են՝

- մայրենի լեզվով գիտատեսական գրականության սղությունը,
- սովորողների գեղարվեստական ընկալունակության ձևավորման գործընթացում մեթոդական համակարգի բացը,
- ինովացիոն միջոցների կիրառմամբ մանկավարժական համապատասխան պայմանների պակասը:

Հետազոտության նպատակն է՝ մշակել պատմամշակութային կոթողների պատկերագրման գործընթացում սովորողների գեղարվեստական ընկալունակության ձևավորման մեթոդական համակարգը:

Հետազոտության օբյեկտը՝ պատմամշակութային կոթողների պատկերագրման միջոցով սովորողների գեղարվեստական ընկալունակության ձևավորման գործընթացն է:

Հետազոտության առարկան՝ սովորողների գեղարվեստական ընկալունակության ձևավորման մեթոդական համակարգն է:

Հետազոտության գիտական վարկածը՝ ամրագրվում է այն հիմքի վրա, որ պատմամշակութային կոթողների պատկերագրման գործընթացում սովորողների գեղարվեստական ընկալունակության ձևավորումը կարելի է դարձնել արդյունավետ, եթե՝

- կազմվի դասավանդման մեթոդական համակարգը,
- մշակվի ինովացիոն միջոցների կիրառմամբ մանկավարժական համապատասխան պայմանների համալիր մոդելը,
- ներդրվի դասավանդման թեմատիկ ծրագիր,
- կազմակերպվի համակարգված և պլանավորված դասընթաց վերոնշյալ գործոնների համադրմամբ:

Հետազոտության խնդիրներն են.

1. ուսումնասիրել խնդրո առարկային վերաբերվող գիտամանկավարժական և մեթոդական գրականությունը,
2. հետազոտել գեղարվեստական ընկալունակության ձևավորման մանկավարժահոգեբանական առանձնահատկությունները,
3. նկարագրել պատմամշակութային կոթողների ուսումնասիրության և պատկերագրման հիմնախնդիրը,
4. կազմել սովորողների գեղարվեստական ընկալունակության ձևավորման մեթոդական համակարգը,
5. մշակել ինովացիոն միջոցների ներգրավմամբ սովորողների գեղարվեստական ընկալունակության ձևավորումն ապահովող մանկավարժական պայմանները,
6. վերլուծել և հիմնավորել փորձարարական աշխատանքի ընթացքն ու արդյունքների հավաստիությունը:

Հետազոտության իրականացման ընթացքում առաջնային խնդիրների լուծման, գիտական վարկածի ստուգման ու հաստատման նպատակով կիրառվել են հետևյալ **հետազոտական մեթոդները՝**

Վերլուծական

- թեմային առնչվող մեթոդական, մասնագիտական, ուսումնական և լրացուցիչ գրականության, համապատասխան ատենախոսությունների, գիտամեթոդական հոդվածների, էլեկտրոնային շտեմարանների, կրթական ծրագրերի ուսումնասիրում և վերլուծություն,

Հետազոտական

- առաջատար ուսումնական հաստատություններում ներդրված փորձի ուսումնասիրություն և արդյունքների վերլուծություն,

Փորձարարական

- պատմամշակութային կոթողների պատկերագրման գործընթացում սովորողների գեղարվեստական ընկալունակության ձևավորմանը նպաստող փորձագիտական մեթոդական համակարգի և մանկավարժական պայմանների կազմում և մշակում,

Էմպիրիկ

- դիտման, վերլուծության, հարցման, որոնողական (պլեներային) գործունեություն:

Հետազոտության գիտական նորույթը.

1. կազմվել է պատմամշակութային կոթողների պատկերագրման գործընթացում սովորողների գեղարվեստական ընկալունակության ձևավորման մեթոդական համակարգը,
2. մշակվել են ինովացիոն միջոցների կիրառմամբ սովորողների գեղարվեստական ընկալունակության ձևավորման մանկավարժական պայմանները,
3. սահմանվել են պատմամշակութային կոթողների պատկերագրման գործընթացում սովորողների գեղարվեստական ընկալունակության ձևավորման մակարդակներն ու չափանիշները,
4. հիմնավորվել է սովորողների գեղարվեստական ընկալունակության ձևավորման փորձարկման արդյունքներով մշակված մեթոդական համակարգի և մանկավարժական պայմանների արդյունավետությունը պատմամշակութային կոթողների պատկերագրման գործընթացում:

Հետազոտության մեթոդաբանական հիմք են հանդիսացել՝ կերպարվեստի դասավանդման մեթոդիկայի, հայ և օտարազգի արվեստագետների, ճարտարապետների, հոգեբանների, մանկավարժների և մեթոդաբանների տեսական ներքոհիշյալ աշխատությունները՝

- գեղարվեստական ընկալունակության ձևավորման և զարգացման հիմնախնդրի հետազոտությունները *(Քեշիշյան, 1995, Амиржанова, 2016, Арнхейм, 1974, Брехт, 1965, Любимов, 2007, Филатова, 2008, Якобсон, 1971),*
- պատմամշակութային կոթողների կազմության և պատկերագրման վերաբերյալ աշխատությունները *(Հասրաթյան, 1975, Հարությունյան, 1992, Մարտիրոսյան, 1995, Միրզախանյան, 2017, Дурново, 1979),*
- ինովացիոն միջոցների ներգրավմամբ պատմամշակութային կոթողների պատկերագրումը բացահայտող հիմնահարցերը *(Андреев, 1996, Вакулина, 2015, Моор, 2010, Рассказов и Филатова, 2017),*
- գեղարվեստական կրթության հիմնախնդիրները *(Աղասյան, 2009, Եղիազարյան, 2002, Հակոբյան, 2006, Մանուկյան, 2019, Մկրտչյան, 1997, Ներսիսյան, 2017, Սարգսյան, 2013, Ֆլջյան, 2014, Алиева, 1995, Игнатьев, 2002, Ростовцев, 1998),*

- տեղեկատվական տեխնոլոգիաների գործածումը սովորողների դասավանդման համատեքստում *(Թոփուզյան, Գյուլամիրյան, Պողոսյան և Ասատրյան, 2020, Մուկոյան, 2010, Սողոյան, 2008, Арефьева, 2007, Бабакова, 2019, Бородкин, Жеребятьев, 2012, Зайцева и Пунина, 2006, Манторова, 2021, Новик, 2019),*
- հոգեբանական, մանկավարժական և մեթոդական տեսությունները *(Ասատրյան և Հակոբյան, 2011, Գևորգյան, Վարդանյան, Դալլաքյան, 2011, Սուխոմլինսկի, 1980, Տուրբովսկոյ, 1981, Амонашвили, 1990, Барабанщиков, 1989, Беликов, 1995, Волынкин, 2007, Кузин, 1997, Леонтьев, 1998, Ломов, 2009, Маслоу, 1999, Новиков, 2010, Рубинштейн, 2000):*

Հետազոտության տեսական նշանակությունը՝ հիմնավորված է առ այն, որ մանկավարժական տեսանկյունից սովորողների գեղարվեստական ընկալունակության ձևավորումը պատմամշակութային կոթողների պատկերագրման գործընթացում ծառայում է որպես դասավանդման հիմնարար սկզբունքների և խնդիրների համակարգման ընդհանրական մեթոդ:

Առաջադրված մեթոդական համակարգը և ինովացիոն միջոցների կիրառմամբ մանկավարժական պայմանները հարստացնում են միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների՝ խնդրո առարկայի շրջանակներում անցկացվող դասընթացների ծրագրային կազմությունը:

Հետազոտության գործնական նշանակությունը՝ ներկայացվել է պատմամշակութային կոթողների պատկերագրման գործընթացում սովորողների գեղարվեստական ընկալունակության ձևավորումը խթանող դասընթացների ստեղծագործական և կատարողական առաջադրանքների համակարգը:

Հետազոտությունն իրականացվել է՝ ՀՀ ԿԳՄՍ Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջի, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Հենակետային վարժարանի, Հայաստանում եվրոպական քոլեջի՝ Կերպարվեստի և Համակարգչային գրաֆիկայի ուղղվածության առարկաների շրջանակներում՝ ընդհանուր առմամբ 211 սովորողների մասնակցությամբ:

Հետազոտության կազմակերպման և անցկացման հիմնական փուլերը.

- **1-ին փուլ – վերլուծական և որոնողական (2020-2021 թթ.)** – Գեղարվեստական, մանկավարժական, հոգեբանական, արվեստագիտական, պատմագիտական գրականության և տվյալ հիմնախնդրի վերաբերյալ կատարված հետազոտությունների համալիր ուսումնասիրում: Հետազոտության նպատակի և դրանից բխող խնդիրների ձևակերպում:
- **2-րդ փուլ – տեսամեթոդական (2021-2022 թթ.)** – Հավաստող գիտափորձի անցկացում: Ստացված արդյունքների վերլուծում և ընդհանրացում: Ձևավորող գիտահիմքի նախապատրաստում:

- **3-րդ փուլ – փորձնական (2022-2023 թթ.)** – Ձևավորող գիտափորձի անցկացում: Հետազոտության տվյալների և արդյունքների վերլուծություն, ամփոփում և ընդհանրացում: Ատենախոսության տեսքով հետազոտության արդյունքների շարադրում:

Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթներն են.

1. սովորողների գեղարվեստական ընկալունակության ձևավորման տեսական հիմնավորումն ունի հիմնարար նշանակություն՝ ուսուցման և պատմամշակութային կոթողների պատկերագրման գործընթացում,
2. կառուցվածքային առանձնահատկությունները ներառում են սովորողների գեղարվեստական ընկալունակության ձևավորման տեսակների, մակարդակների, աստիճանների համալիր մոդելի կազմը, որոնք խթանում են միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների մասնագիտական դասընթացներում՝ պատմամշակութային կոթողների պատկերագրման միջոցների կիրառման գործընթացը,
3. պատմամշակութային կոթողների կառուցվածքի և պատկերագրման հիմնախնդիրների ուսումնասիրումն ու վերլուծումը օժանդակում են ուսուցման ընթացքում սովորողների տեսական կարողությունների, գործնական հմտությունների ձևավորմանն ու օբյեկտների գրագետ և ներդաշնակ պատկերագրմանը,
4. պատմամշակութային կոթողների պատկերագրման գործընթացի մեթոդական համակարգը հանդիսանում է սովորողների գեղարվեստական ընկալունակության ձևավորման հիմնային միջոցը՝ շեշտադրելով մասնագիտական դասընթացների ընտրված թեմատիկան,
5. պատմամշակութային կոթողների պատկերագրման գործընթացում ինովացիոն միջոցների կիրառմամբ մանկավարժական պայմանների համալիր մոդելի ներդրումը նպաստում է սովորողների կրթական որակի բարելավմանը, ինչպես նաև պատկերագրական, վիզուալիզացման տեխնոլոգիաների ծանոթացմանն ու յուրացմանը,
6. փորձարարական աշխատանքի ընթացքի նկարագրումը, գիտափորձի ու արդյունքների հավաստիության վերլուծումը հիմնավորում են մեր կողմից առաջ քաշված հիմնական դրույթները:

Հետազոտության արդյունքների փորձագիտությունը և տվյալների հուսալիությունը: Ատենախոսության կազմակերպման ընթացքն ու ստացված արդյունքները պարբերաբար քննարկվել են Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Գեղարվեստական կրթության ֆակուլտետի «Կերպարվեստի» ամբիոնի, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Հենակետային վարժարանի «Մշակութային հոսք» բաժնի, Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջի «Հումանիտար-տնտեսագիտական» ամբիոնի, Հայաստանում եվրոպական քոլեջի «Դիզայնի» ամբիոնի նիստերում՝ հաշվետվությունների ձևով:

Հետազոտության արդյունքների հավաստիությունը հիմնավորվել է աշխատանքի մեթոդաբանության հիմնարար դրույթներով, որը ապահովվել է ինչպես տեսականորեն, այնպես էլ հավաստող և ստուգիչ գիտափորձերի համալիր վերլուծությամբ, սովորողների տարիքային, անհատական և գեղարվեստամանկավարժական առանձնահատկությունների համարժեք հաշվառման պայմաններում:

Հետազոտության թեմայի շրջանակում տպագրվել են թվով 10 գիտական հոդվածներ (տեղական և միջազգային շտեմարաններում), ներկայացվել են 3 զեկուցումներ միջազգային գիտաժողովներում, ինչպես նաև Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի խորհրդի դրական երաշխավորվածությամբ հաստատված է տպագրության մեկ մենագրություն:

Հետազոտության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, եզրակացությունից, գրականության ցանկից և երեք հավելվածներից: Ընդհանուր 146 էջ (առանց հավելվածների) ներառյալ՝ 151 անուն գրականություն, 1 տրամագիր, 4 աղյուսակ, 4 գծապատկեր:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության ներածության մեջ հիմնավորված են թեմայի արդիականությունը, ձևակերպված են նպատակը, հետազոտության օբյեկտը, առարկան, գիտական վարկածը, խնդիրները: Ներկայացված են հետազոտական մեթոդները, գիտական նորույթը, հետազոտության մեթոդաբանական հիմքերը, տեսական և գործնական նշանակությունը, հետազոտության կազմակերպման և անցկացման հիմնական փուլերը, պաշտպանության ներկայացվող դրույթները, ատենախոսության արդյունքների փորձաքննությունը, տվյալների հուսալիությունը, հետազոտության կառուցվածքը և ծավալը:

Ատենախոսության՝ **«Սովորողների գեղարվեստական ընկալունակության ձևավորման գիտատեսական հիմքերը պատմամշակութային կոթողների ուսումնասիրման համատեքստում»** խորագրով առաջին գլուխը բաղկացած է երեք ենթագլխից.

Առաջին գլխի առաջին ենթագլխում՝ **«Գեղարվեստական ընկալունակության ձևավորման տեսական հիմնավորումը պատմամշակութային կոթողների պատկերագրման գործընթացում»**, համապարփակ ուսումնասիրությամբ լուսաբանված են սովորողների գեղարվեստական ընկալունակության ձևավորման հիմքերն ու տեսական հիմնավորումները հայրենի և արտասահմանյան հեղինակների աշխատություններում:

Առաջին գլխի երկրորդ ենթագլխում՝ **«Սովորողների գեղարվեստական ընկալունակության ձևավորման կառուցվածքային**

առանձնահատկություններն արդի կրթական համակարգում», ներկայացրել ենք սովորողների գեղարվեստական ընկալունակության ձևավորման կառուցվածքային առանձնահատկությունների ժամանակակից մոտեցումներն ու մակարդակները: Այս համատեքստում մանկավարժական հիմնական խնդիրը յուրաքանչյուր սովորողի մեջ գեղարվեստական կերպարն իր բոլոր բաղադրիչների ամբողջության մեջ սինթեզելն ու զարգացնելն է, որն ընդհանրանում է սովորողների գեղարվեստական ընկալունակության ձևավորման կառուցվածքային մոդելի կազմում, որը բաղադրվում է ըստ տեսակների, մակարդակների և աստիճանների (Տե՛ս Գծապատկեր 1):



Գծապատկեր 1. *Սովորողների գեղարվեստական ընկալունակության ձևավորման կառուցվածքային առանձնահատկությունների մոդելը:*

Առաջին գլխի երրորդ ենթագլխում՝ **«Պատմամշակութային կոթողների կազմության և պատկերագրման հիմնախնդիրն ուսուցման մեջ»**, անդրադարձել ենք Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս գտնվող հայկական նշանավոր կոթողային հուշարձանների ճարտարապետական կազմությանն ու պատկերագրական հիմնախնդիրներին (Լեռնային Ղարաբաղի և Արևմտյան Հայաստանի կոթողների օրինակով):

Այստեղ առաջնային ենք համարել հայրենասիրությանը միտված պատմամշակութային կոթողների մասնագիտական ուսումնասիրման գործընթացը պատկերագրման միջոցով, որի շնորհիվ սովորողների մեջ էապես կզարգանա գեղարվեստական ընկալունակության ձևավորումն ու հայրենաճանաչության վեհ առաքինությունը:

Ատենախոսության՝ **«Սովորողների գեղարվեստական ընկալունակության ձևավորման մեթոդական համակարգի փորձարարական հիմնավորումը պատմամշակութային կոթողների պատկերագրման գործընթացում»** խորագրով երկրորդ գլուխը բաղկացած է երեք ենթագլխից.

Երկրորդ գլխի առաջին ենթագլխում՝ **«Սովորողների գեղարվեստական ընկալունակության ձևավորման մեթոդական համակարգի առանձնահատկությունները պատկերագրման գործընթացում»**, համադրելով սովորողների զգացմունքային ապրումակցումներն ու դրանց անդրադարձը պատկերագրման գործընթացում՝ մշակել ենք սովորողների գեղարվեստական ընկալունակության ձևավորման մեթոդական համակարգը, որպես պատմամշակութային կոթողների պատկերագրման միջոց: Այն ներառում է՝ գեղարվեստական ընկալունակության զարգացման նպատակն ու խնդիրները, դիդակտիկ սկզբունքները, ուսուցման մեթոդներն ու մանկավարժական պայմանները, ուսուցման միջոցները, ինչպես նաև ուսուցման մակարդակի գնահատման չափանիշներն ու ցուցիչները, որոնց համադրման արդյունքում էլ ձևավորվում և զարգանում է սովորողների գեղարվեստական ընկալունակությունը պատմամշակութային կոթողների պատկերագրման գործընթացում (Տե՛ս Գծապատկեր 2): Գծապատկեր 2-ի գիտականության, հետևողականության ստեղծագործական ակտիվության սկզբունքներն ապահովում են սովորողների կողմից գիտելիքների յուրացման հոգեբանական ասպեկտների համապատասխանությունը՝ տեսական և էմպիրիկ, օբյեկտիվ և սուբյեկտիվ, զգայական և համընդհանուր ճանաչողության մակարդակներում: Սույն մեթոդական համակարգն ավելի արդյունավետ է գործում առարկայական ծրագրերի դասավանդման՝ «Հրույցներ արվեստի մասին», «Թեմատիկ պատկերագրում», «Դեկորատիվ-կիրառական արվեստ», «Պատկերում բնօրինակից» խառը համակցված տեսակների համալիր մոդելի կիրառման շրջանակում:

Գծապատկեր 2. *Սովորողների գեղարվեստական ընկալունակության ձևավորման մեթոդական համակարգը:*

Վերոնշյալ համակարգը ներառում է պատմամշակութային կոթողների պատկերագրման տեսակների խառը համակցված մոդելը, որտեղ համակցվել են թեմայի վերաբերյալ տեսական նյութի ուսումնասիրումն ու քննարկումը (Զրույցներ արվեստի մասին), արտապատկերումն ու պատկերագրական առանձնահատկությունների թեմատիկ ծանոթացումը (Թեմատիկ պատկերագրում), կոթողի առանձին զարդանախշերի և դետալների դեկորատիվ պատկերումը (Դեկորատիվ-կիրառական արվեստ), բացօթյա և արվեստանոցային պատկերագրումը (Պատկերում բնօրինակից) (Տե՛ս Գծապատկեր 3):



***Գծապատկեր 3**. Պատմամշակութային կոթողների պատկերագրման տեսակների խառը համակցված մոդելը:*

Առարկայական ծրագրերի դասավանդման սույն մոդելի շրջանակում սովորողներին հնարավորություն է տրվում առավել մանրամասնորեն ծանոթանալ և մասնագիտական տեսանկյունից ուսումնասիրել առաջադրվող թեմաները, ուր արտացոլված են հայկական նշանավոր պատմաճարտարապետական կոթողները: Այն ունի ոչ միայն կրթադաստիարակչական նշանակություն, այլև հանդիսանում է

գեղարվեստական ընկալունակության ձևավորման և զարգացման գնահատելի միջոց, որն ըստ մեր առաջարկվող ծրագրի նախատեսված է կիրառվելու Կերպարվեստի և Համակարգչային գրաֆիկայի առարկայական ծրագրերի ներքոհիշյալ թեմաների շրջանակներում՝ «Երկիր Նաիրի», «Հեթանոսական Հայք», «Հոգևոր մայրաքաղաք», «Հազար ու մեկ եկեղեցի», «Ծովային Հայաստան», «Կովկասյան կոլորիտ»:

Երկրորդ գլխի երկրորդ ենթագլխում՝ **«Պատմամշակութային կոթողների պատկերագրման ինովացիոն միջոցների կիրառումը, որպես սովորողների գեղարվեստական ընկալունակության ձևավորման մանկավարժական պայման»**, մշակել ենք ինովացիոն միջոցների կիրառմամբ սովորողների գեղարվեստական ընկալունակության ձևավորման մանկավարժական պայմանների համալիր մոդելը: Այստեղ սովորողների գեղարվեստական ընկալունակության մանկավարժական պայմաններն իրենց ազդեցության մակարդակով բաժանված են՝ արտաքինի և ներքինի, իսկ իրենց ազդեցության էությամբ առանձնանում են օբյեկտիվ և սուբյեկտիվ պայմանները, որտեղ առաջինը ներառում են՝ ավանդական և ինովացիոն գեղարվեստական կրթության համադրումն ու նախագծային ուսուցումը, իսկ երկրորդը՝ գեղարվեստական նորարարական գաղափարների մշակումը և ծավալատարածական մտածողությունը: Ըստ ազդեցության առանձնահատկությունների տարբերակվում են՝ ընդհանուր և հատուկ պայմաններ, որոնք օժանդակում են սովորողների գեղարվեստական ընկալունակության ձևավորմանն ու զարգացմանը՝ ներառյալ վերջին շրջանում մեծ զարգացում ապրող արհեստական բանականության գործածմամբ (Տե՛ս Գծապատկեր 3): Ըստ այդմ, ինովացիոն մասնագիտական տեխնոլոգիաների կիրառումը հնարավորություն է տալիս մասնագիտական ուսուցման գործընթացը կազմակերպել ինտերակտիվ, հիբրիդային, հեռավար ուսուցման, ցանցային համակարգի և գիտելիքների ստուգման հարթակի միջոցներով՝ մեկտեղելով էլեկտրոնային անհպում գրատախտակի, գրաֆիկական պլանշետի, ստիլուսի, թվային էկրանի, սիլիկոնե ստեղնաշարի ու հատուկ մկնիկի հնարավորություններն ինչպես առկա հիմնական մասնագիտական ծրագրերով (Corel Draw, Adobe illustrator, Adobe Photoshop), այնպես էլ հատուկ նախագծված ծրագրային հավելվածներով (Procreat, Tayasui Memopad, Drawing Desk, PicsArt Color Paint ևն):

Երկրորդ գլխի երրորդ ենթագլխում՝ **«Փորձարարական աշխատանքի նկարագիրն ու արդյունքների հավաստիությունը»**, ներկայացված են առաջադրված խնդիրների և նպատակների արդյունքները Վաղարշապատի Ս. Հռիփսիմե տաճարի օրինակով: Փորձարարական աշխատանքներում ուսումնասիրության օբյեկտ է ծառայել ընդհանուր առմամբ 211 սովորող. այդ թվում՝ ԵԻՊՔ «Համակարգչային գեղարվեստական նախագծում» բաժնի 70 սովորող, ՀՊՄՀ ՀՎ «Կերպարվեստ-դիզայն» ենթահոսքի 65 սովորող, ՀԵՔ «Դիզայն» բաժնի 76 սովորող: Կերպարվեստի դասաժամերին (Գունանկար,

Գծանկար և Կոմպոզիցիա) «Թեմատիկ պատկերագրում», «Զրույցներ արվեստի մասին», «Պատկերում բնօրինակից», «Դեկորատիվ-կիրառական արվեստ» խառը համակցված մոդելի կիրառման արդյունքում սովորողները պատկերագրեցին Ս. Հռիփսիմե տաճարը՝ շեշտելով կոթողի կառուցվածքային առանձնահատկություններն ու գեղարվեստական ոճը:



Գծապատկեր 4. *Ինովացիոն միջոցների կիրառմամբ սովորողների գեղարվեստական ընկալունակության ձևավորման մանկավարժական պայմանների համալիր մոդելը:*

ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԸՆԿԱԼՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ			
Միավորներ	**Մակարդակ**	**Հավաստող**	**Ձևավորող**
0-3	ցածր	68 (32%)	17 (8%)
4-6	միջին	107 (51%)	44 (21%)
7-8	բարձր	36 (17%)	127 (60%)
9-10	շատ բարձր	0 (0%)	23 (11%)

Աղյուսակ 1

Փորձարարական աշխատանքի և հետազոտությունների արդյունքների հաստատումը հնարավորություն տվեց հաստատելու պատկերագրման միջոցով սովորողների գեղարվեստական ընկալունակության զարգացման մեթոդական համակարգի իրագործելիությունն ու հուսալիությունը (Տե՛ս Աղյուսակ 1): Աղյուսակ 1-ից հետևում է, որ հետազոտության հավաստող արդյունքում սովորողների մեծ մասը դեռևս գործել է ցածր և միջին տիրույթում, և միայն 17%-ը՝ բարձր մակարդակում: Ձևավորող գիտափորձի արդյունքում արդեն նշյալ ցածր և միջին մակարդակի վրա է մնացել սովորողների 29%-ը, իսկ ահա 71%-ը բարձրացել է դեպի բարձր և շատ բարձր մակարդակներ: Փաստվում է սովորողների գեղարվեստական ընկալունակության ձևավորման ամբողջական մակարդակների բարձրացումը, որը պարզորոշ երևում է Տրամագիր 1-ից:



Տրամագիր 1. *Սովորողների գեղարվեստական ընկալունակության ձևավորման մակարդակի գնահատումը:*

Այսպիսով, ամփոփելով սովորողների գեղարվեստական ընկալունակության ձևավորումը պատմամշակութային կոթողների պատկերագրման գործընթացում, մենք մեկ անգամ ևս կազմեցինք արձանագրող ուսումնասիրություն և համապատասխան աղյուսակ՝ սովորողների կողմից գեղարվեստական ընկալունակության ձևավորման առանձնահատկությունների վերաբերյալ՝ ինովացիոն միջոցների շնորհիվ պատմամշակութային կոթողների պատկերագրման համատեքստում: Այդ աշխատանքների վերլուծության արդյունքում պարզ էր դարձել, որ թվային պլանշետով պատկերագրումը սովորողների շրջանում ձևավորել էր գեղարվեստական ընկալունակության առավել բարձր մակարդակ և նպաստել կատարողականության աճին (Տե՛ս Աղյուսակ 2):

ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԸՆԿԱԼՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆԸ ՆՊԱՍՏՈՂ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՈԹՈՂՆԵՐԻ ՊԱՏԿԵՐԱԳՐՄԱՆ ԱՎԱՆԴԱԿԱՆ ԵՎ ԻՆՈՎԱՑԻՈՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ (ԳՆԱՀԱՏՄԱՆ 10 ԲԱԼԱՅԻՆ ՑՈՒՑԻՉՈՎ)			
Պատկերագրման տեսակը	Գեղարվեստական ընկալունակության մակարդակի ցուցիչը	Որակական հատկանիշների ցուցիչը	Խթանիչ ազդակների ցուցիչը
Ավանդական	6	7	5
Ինովացիոն	9	9	8

Աղյուսակ 2

Ըստ Աղյուսակ 2-ի՝ մասնագիտական ունակությունների հմտության շնորհիվ հնարավոր է դարձել որակական տեսանկյունից առավել զարգացնել պատմամշակութային կոթողների պատկերագրման տեխնիկան: Ակնհայտ է, որ ի տարբերություն պատկերագրման ավանդական մոտեցումների, ինովացիոն միջոցներով աշխատանքը նպաստել է սովորողների՝ թվային նորագույն տեխնոլոգիաների կիրառման հմտություններին, ինչպես նաև ցանկություն առաջացրել ծանոթանալու նմանատիպ այլ միջոցներին ևս:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամփոփելով մեր ատենախոսության առաջ քաշած դրույթները, ինչպես նաև վերլուծելով կատարած գիտափորձն ու ուսումնասիրությունները՝ ստացված տվյալների հետազոտության հիման վրա կարող ենք եզրահանգել, որ.

1. Հանգամանորեն ուսումնասիրելով խնդրո առարկային վերաբերվող տեղական և միջազգային գիտամանկավարժական, արվեստագիտական գրականությունը, էլեկտրոնային շտեմարաններն ու մասնագիտական կայքերն՝

ընդգծվել է հետազոտվող հիմնախնդրի մշակվածության ցածր աստիճանն ու պատմամշակութային կոթողների պատկերագրության համալիր մոդելի բացակայությունը:

2.Նկարագրվել են պատմամշակութային կոթողների պատկերման կառուցվածքային և պատկերագրական առանձնահատկությունները՝ ավանդական և ինովացիոն միջոցների ներգրավմամբ (երկչափ և եռաչափ մոդելավորում):

3.Կազմվել է սովորողների գեղարվեստական ընկալունակության ձևավորման մեթոդական համակարգը, որը ներառում է՝ մոդելի նպատակն ու խնդիրները, դիդակտիկ սկզբունքները, ուսուցման կազմակերպման ձևերն ու պայմանները, ուսուցման մեթոդներն ու միջոցները, ինչպես նաև ուսուցման մակարդակի գնահատման չափանիշներն ու ցուցիչները, որոնց համադրման արդյունքում էլ ձևավորվում և զարգանում է պատմամշակութային կոթողների պատկերագրման արդյունավետ գործընթացը:

4.Մշակվել է սովորողների գեղարվեստական ընկալունակության ձևավորումն ապահովող մանկավարժական պայմանների համալիր մոդելը, որն ընդգրկում է ազդեցության՝ արտաքին և ներքին տիպերը, օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնները, ինչպես նաև առանձնահատկությունների ընդհանուր և հատուկ պայմանները: Առաջնահերթ շեշտադրվել է ինովացիոն տեխնոլոգիաների կիրառումը, որպես պատմամշակութային կոթողների պատկերագրման արդյունավետ միջոց:

5.Փաստվել է մասնագիտական առարկայական ծրագրերի դասավանդման խառը համակցված տեսակների համալիր մոդելի արդյունավետությունը, որն ընդգրկում է թեմատիկ նյութի ուսումնասիրումն ու քննարկումը (Զրույցներ արվեստի մասին), արտապատկերումն ու պատկերագրական առանձնահատկությունների ծանոթացումը (Թեմատիկ պատկերագրում), կոթողի առանձին զարդանախշերի և դետալների դեկորատիվ պատկերումը (Դեկորատիվ-կիրառական արվեստ), բացօթյա և արվեստանոցային պատկերագրումը (Պատկերում բնօրինակից):

6.Տեսական և գործնական դասընթացների շրջանակում վերլուծվել է փորձարարական աշխատանքի ընթացքը՝ գծապատկերների, աղյուսակների, տրամագրի մշակման և ընդհանուր տվյալների համադրման միջոցով հաստատելով գիտափորձն ու արդյունքների հավաստիությունը:

Այսպիսով, փորձարարական աշխատանքի նկարագիրն ու արդյունքների հավաստիության հաստատումն ընդգծեց այն համոզմունքը, որ սովորողների գեղարվեստական ընկալունակության ձևավորումը պատմամշակութային կոթողների պատկերագրման գործընթացում ներառում է նորարարական տեխնոլոգիաների համադրման առաջնահերթ դիրքորոշումը և արտահայտում սովորողների գեղարվեստական արդի կարիքներն ու արժեքային կողմնորոշումները:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հրատարակված հետևյալ աշխատություններում

1.Ավետիսյան Գ. Ս., Գեղարվեստական ընկալունակության ձևավորումը պատմամշակութային կոթողների պատկերագրման գործընթացում համակարգչային գրաֆիկայի կիրառմամբ. «Գիտական տեղեկագիր», №2 (45), Ե., 2023, էջ 119-131:

2.Аветисян Г. С., Инновационные подходы к визуализации историко-культурных памятников в современной образовательной системе: "Новеллы права, экономики и управления 2022" - в 2 т.: сборник научных трудов по материалам VIII международной научно-практической конференции (г. Гатчина, 25 ноября 2022 г.), Изд-во ГИЭФПТ, 2023. – Т. 1. – с. 339-341.

3.Avetisyan G. S., The methodological system of student's artistic perceptibility formation in the modern educational system: "Development of Education, Science and Buisness: Results 2022": Proceedings of the International Scientific and Practical Internet Conference, December 22-23, 2022, Dnipro, Ukraine, pp. 4-5.

4.Аветисян Г. С., Структурные процессы художественного восприятия в современном образовании: "Актуальные проблемы науки и практики: Гатчинские чтения–2022" - в 2 т.: сборник научных трудов по материалам IX Международной научно-практической конференции, приуроченной к празднованию 300-летия Российской академии наук (г. Гатчина, 27–28 мая 2022 г.), Изд-во ГИЭФПТ, 2022. – Т. 1. – с. 363–365.

5.Аветисян Г. С., Изображение историко-культурных памятников как условие формирования художественного восприятия учащихся: "Социально-гуманитарные технологии в управлении человеческими ресурсами в сфере физической культуры, спорта и здоровья. Потенциал спорта в системе международных отношений" - сборник научных статей и докладов Всероссийской научно-практической конференции с международным участием, 2 апреля 2021 г. – СПб.: ПОЛИТЕХ-ПРЕСС, 2021. – с. 123 – 125.

6.Аветисян Г. С., Особенности развития художественного восприятия учащихся в средних специальных учебных заведениях: "Актуальные проблемы науки и практики: Гатчинские чтения–2021" - в 2 т.: сборник научных трудов по материалам VIII Международной научно-практической конференции (г. Гатчина, 21–22 мая 2021 г.), Изд-во ГИЭФПТ, 2021. – Т. 1. – с. 278 – 280.

7.Ավետիսյան Գ. Ս., ՈՒխտագնացություն Տայոց աշխարհ. «Հայագիտական հանդես», №5 (59), Ե., 2022, էջ 213-225:

8.Ավետիսյան Գ. Ս., Արցախի Հանրապետության պատմամշակութային կոթողների ուսումնասիրումը «Զրույցներ արվեստի մասին» թեմատիկ դասընթացների շրջանակում. «Գիտական Արցախ», №1 (12), Ե., 2022, էջ 196-204:

9.Ավետիսյան Գ. Ս., Հայաստանի առաջին Հանրապետության «Արևապաշտ» նկարիչները. «Պատմություն և քաղաքականություն» գիտական հանդես, № 3 (8), Ե., 2020, էջ 76-81:

10.Ավետիսյան Գ. Ս., Կարս քաղաքը հայ ուխտավորի աչքերով. «Պատմություն և քաղաքականություն» գիտական հանդես, № 4 (5), Ե., 2019, էջ 112-121:

ГАГИК СЕДРАКОВИЧ АВЕТИСЯН
ФОРМИРОВАНИЕ ХУДОЖЕСТВЕННОЙ ВОСПРИИМЧИВОСТИ УЧАЩИХСЯ В ПРОЦЕССЕ ИЗОБРАЖЕНИЯ ИСТОРИКО-КУЛЬТУРНЫХ ПАМЯТНИКОВ

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13.00.02 - “Методика преподавания и обучения (изобразительное искусство)”.

Защита диссертации состоится 30.05.2024 г. в 12:00 часов на заседании специализированного совета педагогики 020 КВОН (Комитет по высшему образованию и науке) РА по присуждению ученых степеней при Армянском государственном педагогическом университете им. Х.Абовяна по адресу: 0010, Ереван, ул.Тиграна Меца 17.

РЕЗЮМЕ

Актуальность исследования: В современных условиях образовательных преобразований, связанных с мировосприятием общества, художественными запросами и интересами, возникли противоречия между растущим спросом на образование и недостаточным процессом его качественного развития и совершенствования. Условия формирования художественной восприимчивости учащихся в процессе изображения историко-культурных памятников тесно связаны с радикальными изменениями в социокультурной жизни страны, развитием новых информационных и педагогических технологий, что стало предметом обсуждения дискуссии для художников, психологов, педагогов, методистов, географов, историков, искусствоведов и этнографов.

Актуальность темы обусловлена необходимостью решения следующих факторов, обусловленных представленными проблемами, что будет способствовать формированию художественной восприимчивости учащихся в процессе изображения историко-культурных памятников. Это:

- отсутствие научной литературы на армянском языке,
- пробел в методической системе в процессе формирования художественной восприимчивости учащихся,
- отсутствие соответствующих педагогических условий с использованием инновационных средств.

Цель исследования - разработать методическую систему формирования художественной восприимчивости учащихся в процессе изображения историко-культурных памятников.

Задачи исследования:

1. изучить научно-педагогическую и методическую литературу, относящуюся к рассматриваемому предмету,

2. изучить педагогико-психологические особенности формирования художественной восприимчивости,

3. описать проблему изучения и изображения историко-культурных памятников,

4. составить методическую систему формирования художественной восприимчивости учащихся,

5. разработать педагогические условия, обеспечивающие формирование художественной восприимчивости учащихся с привлечением инновационных средств,

6. проанализировать и обосновать ход экспериментальной работы и достоверность результатов.

Научная новизна исследования:

- составлена методическая система формирования художественной восприимчивости учащихся в процессе изображения историко-культурных памятников,
- разработаны педагогические условия формирования художественной восприимчивости учащихся с использованием инновационных средств,
- определены уровни и критерии формирования художественной восприимчивости, учащихся в процессе изображения историко-культурных памятников,
- была обоснована эффективность методической системы и педагогических условий, разработанных по результатам тестирования на формирование художественной восприимчивости учащихся в процессе изображения историко-культурных памятников.

Теоретическое значение исследования: обосновано тем, что с педагогической точки зрения формирование художественной восприимчивости учащихся в процессе изображения историко-культурных памятников служит универсальным методом координации основных принципов и задач обучения. Предложенная методическая система и педагогические условия с использованием инновационных средств обогащают программный состав курсов, проводимых средне-профессиональными учебными заведениями в рамках рассматриваемого предмета.

Практическая значимость исследования: была представлена система творческих и исполнительских заданий курсов, способствующих формированию художественной восприимчивости учащихся в процессе изображения историко-культурных памятников.

Структура и объем исследования: Диссертация состоит из введения, двух глав, заключения, списка литературы и трех приложений. Всего 146 страниц (без приложений), включая: 151 наименование литературы, 1 диаграмму, 4 таблицы, 4 графики.

GAGIK AVETISYAN

LEARNERS ARTISTIC PERCEPTIBILITY FORMATION IN PROCESS HISTORIC-CULTURAL MONUMENTS DEPICTION

Dissertation for the PhD degree in pedagogical sciences in specialty area 13.00.02 – "Methodology of Teaching and Learning" (Fine arts).

The defense will be held on 30.05.2024, at 12°°, at the meeting of the specialized council "Pedagogy", 020 HESC (Higher Education and Science Committee) to to be held at the Armenian State Pedagogical University after Kh. Abovyan: 0010, 17 Tigran Mets, Yerevan.

SUMMARY

The relevance of the research: In modern conditions of educational transformations related to the worldview of society, artistic demands and interests, contradictions have arisen between the growing demand for education and the insufficient process of its qualitative development and improvement. The conditions for the learners artistic perceptibility formation in process historic-cultural monuments depiction are closely related to radical changes in the socio-cultural life of the country, the development of new information and pedagogical technologies, which became the subject of discussion for artists, psychologists, teachers, methodologists, geographers, historians, art historians and ethnographers.

The relevance of the topic is due to the need to solve the following factors due to the presented problems, which will contribute to the learners artistic perceptibility formation in process historic-cultural monuments depiction. This:

- lack of scientific literature in the Armenian language;
- a gap in the methodological system in the process of forming the artistic sensitivity of students;
- the lack of appropriate pedagogical conditions using innovative means.

The purpose of the research is to develop a methodological system for the learners artistic perceptibility formation in process historic-cultural monuments depiction.

Objectives of the research:

1. Study scientific, pedagogical and methodological literature related to the subject under consideration;
2. Study the pedagogical and psychological features of the formation of artistic perceptibility;
3. Describe the problem of studying and depicting historic-cultural monuments;
4. Create a methodological system for developing the artistic perceptibility of students;
5. Develop pedagogical conditions that ensure the formation of artistic perceptibility of learners using innovative means;
6. Analyze and justify the progress of experimental work and the reliability of the results.

Scientific novelty of the research:

- A methodological system for the learners artistic perceptibility formation in process historic-cultural monuments depiction has been compiled;
- Pedagogical conditions for the formation of artistic perceptibility of learners using innovative means have been developed;

- the levels and criteria for the learners artistic perceptibility formation in process historic-cultural monuments depiction are determined;

- the effectiveness of the methodological system and pedagogical conditions developed based on the results of testing for the learners artistic perceptibility formation in process historic-cultural monuments depiction was substantiated.

The theoretical significance of the research: is justified by the fact that, from a pedagogical point of view, the learners artistic perceptibility formation in process historic-cultural monuments depiction serves as a universal method of coordinating the basic principles and objectives of teaching. The proposed methodological system and pedagogical conditions using innovative means enrich the program composition of courses conducted by secondary vocational educational institutions within the framework of the subject under consideration.

Practical significance of the research: a system of creative and performing tasks of the courses was presented, contributing to the learners artistic perceptibility formation in process historic-cultural monuments depiction.

The structure and volume of the research: The dissertation consists of an introduction, two chapters, a conclusion, a list of references and three appendices. A total of 146 pages (without attachments), including: 151 titles of literature, 1 diagram, 4 tables, 4 graphs.